

Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


ԱՆԴՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԵՎԱԿԱՆ ԿՐԼԵԿՏԻՎՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ
„ԱՆԴՐԿՈՒԽՈԶԿԵՆՏՐՈՆ“



346-56(48c)

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ 1930 թվի ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ԱԿՑԻՈՆԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ „ԶԱԿՈՐԴԱՍՏՐՈՑ“

ԲԻՏԻՍ-1931

659
Z-94

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ 1930 թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՔԸՆՎԱԾԻ Խ. Ա. Հ. Մ-ՑԱՆ ԿՈԼՏՆՑ-ԿԵՆՏՐՈՆԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՂՈՒՄԻՒՅԻՆ

1) Հաշվետվությունը, վորպես կանոն, կազմում և կոլտնտեսության վարչությունը, և այն հանդիսանում է վորպես փաստաթուղթ առաջին հերթին իրեն կոլտնտեսության համար:

2) Գործառնական (օպերատիվն) և հաշվետու վիճակագրական նպատակների համար իսկական հաշվետվությունից կոլեկտիվը հանում և 2 պատճեն, վոր հաստատվում են վարչության կողմից և ուղարկվում շրջմիությանը:

3) Բոլոր կոլտնտեսությունները, վորոնք չունեն հաշվետարներ կամ թե շրջկոլտնտմիության կողմից հաշվառումը և հաշվատարությունը թույլ ե դրված, պետք և կազմակերպեն ամենալայն ոգնություն՝ տարեկան հաշվետվությունը կազմելու գործի վերաբերմամբ, լծելով դրան տեղական շրջ-աշխատակիցներին և շահագրգիռ հիմնարկներին, այդ ուղղությամբ մորիլիզացիայի յենթարկելով կուսակցական, հասարակական կազմակերպությունների ուղագրությունը:

4) Շրջկոլմիությունները, հարկ յեղած ստուգման յենթարկելով նյութերը, տարեկան հաշվետվության մի որինակը ուղարկում են կոլմիություններին, կամ հանրապետական և յերկրային կոլկենտրոնին:

5) Տարեկան ճիշտ հաշվետվությունն ապահովելու նպատակով՝ պարտադրել կոլմիություններին, վոր նախքան հաշվետու կամպանիային անցները՝ դեկտեմբեր ամսում կազմակերպեն և կոլ-աշխատակիցների հետ ունենան հրահանդչական խորհրդակցություններ հաշվետվություն կազմելու ուղղությամբ:

14.06.2013

6) Հաշվետվություններ կազմելու և անցկացնելու վերաբեր-
ամբ նկատի ունենալ հետեւյալ ժամկետները.

ա) Կոլտնտեսությունները՝ վոչ ուշ քան 1931 թ. հունվարի
5-ը, տարեկան հաշվետվությունից 2-ական որինակ ներկայաց-
նում են շրջ-կոլմիությանը:

բ) Շրջկոլմիությունները հաշվետվությունից մեկական որի-
նակ ներկայացնում են մարզպային (յերկրային) կամ հանրապե-
տական կոլմիությանը, վոչ ուշ քան գետրվարի մեկը:

7) Տարեկան հաշվետվությունները ժամանակին պատրաս-
տելու և ուղարկելու համար պատասխանատու յեն շրջկոլմիու-
թյունները, կոլտնտվարչությունները:

8) Տարեկան հաշվետվություններին պետք և կցված լինեն
կոլվարչությունների համառոտ բացատրական գրությունները
յերկու յերեսից վոչ ավելի:

9) Շրջկոլմիությունն իր մոտ մնացած որինակի հիման
վրա ստուգում և հաշվետվությունը և, թիրություններ հայտ-
նաբերելու դեպքում, վորպես լրացումն ուղարկում է ուղղուա-
ները:

10) Շրջկոլմիությունը տարեկան հաշվետվությունն անմի-
ջապես ուղարկում և յերկրային կենտրոնին:

II ԳԵՂԱԾՔ ԽՍՀՄ ԲԺՇ ՓՈՂԱԾՔԻՑԻՑԻ ԿՈՄԽԱՐԻՑԻ 1930 թ. ՀԱՎԵՄԲԵ-
ՐԻ 27-ի ՎՈՐՈՇՈՒԹՅԻ, ԱՄ ՎԵՐԲԵՐՈՒՄ և ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՅԱՀՏԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հաշվետվության ընդունած ձեզ համարել միակը բոլոր
կոլտնտեսությունների համար և ընդ սմին արգելել ամեն մի
կազմակերպության, վոր նա չմտցնի այս կամ այն լրացուցիչ
ձեռք, ինչպես նաև չփոխե տվյալ հաշվետվության ձեզ»: Համա-
ձայն կոլտնտ. կենտրոնի վարչության վորոշման՝ ԽՍՀՄ տեր-
բիտորիայի մեջ մանող ամեն մի կոլտնտեսություն՝ կանոնադրու-
թյան համապատասխան պարտավոր և 1930 թ. վերջում իր տըն-
տեսական-արտադրական գործունեյության մասին հաշիվ տալ
ինչպես կոլտնտեսության անդամներին, նույնպես և կուսակցա-
կան, խորհրդային որդաններին ու կոլտնտ. սիստեմի գերադաս
միություններին:

Կոլտնտեսությունների անվան տակ հասկացվում են կոլ-
տնտեսության հետեւյալ յերեք ձևերը. 1) գյուղատնտեսական
կոմմունա, 2) գյուղատնտեսական արտել և 3) հողոգագործման
ընկերություններ:

Տարեկան հաշվետվությունը, ինչպես կանոն, կազմվում և
1930 թ. հունվարի 1-ից մինչև 1931 թ. դեկտեմբերի 31-ը:

Այն կոլտնտեսությունները, վորոնք ծնունդ են առել 1930
հաշվետու տարվա ընթացքում, ինչպես որինակ, գարնանային
գյուղատնտեսական կամպանիայի, բերքի հավաքման, աշնանա-
հերկի կամպանիայի ընթացքում, նույնպես պետք և կազմեն
հաշվետվություն այն ժամանակաշրջանի համար, վորը վորոշվում
և իրենց կոլեկտիվ արտադրական գործունեյության սկզբից մին-
չև 1930 թ.:


Բացի այդ, ԽՍՀՄ տերբիտորիայի վրա յեղած կոլեկտիվ
միացումների լիակատար հաշվառման նպատակով ըլանկը պետք
ե կազմին և այն կոլտնտեսությունները, վորոնք կազմակերպվել
են ու ձեռվորել իրենց կոլեկտիվը մինչև 1930 թ. դեկտեմբերի
13-ը և վորոնք, սակայն, կոլեկտիվ տնտեսական աշխատանքնե-
րի գեռ չեն ձեռնարկել:

Այդպիսի գեպքում լրացվում ե ըլանկի միմիայն ընդհանուր
տեղեկություններին վերաբերող բաժինը, ինչպես որինակ՝ տըն-
տեսությունների ընդհանուր թիվը, կոլտնտեսությունների մեջ
ներառված բնակչությունը, անդամների թիվը, նրանց ազգային
կազմը, կուլտ-կենցաղային հիմնարկությունները, յեթե այդպի-
սիներ կան, համայնացված հողային արտատեղիները (ՅԵՄԵ-
ՆԵ ՍՊԱՀ ԱՅՐԱԿԱՆ ՀԱՅԱՀՏԱՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ), համայնացված տնտեսական կառուցումների քա-
նակն ու ծավալը, գոյություն ունեցող մեռյալ բարդ ինվենտա-
րը, համայնացված և անհատականորեն ոգտագործվող անասուն-
ների քանակը, նույնպես և ցույց ե տրվում կոլկազրերի կազմն
ըստ մամնազիտությունների, անբաժանելի ֆոնդերը, փայերը և
ներդրությունները:

Բայց պիտի նկատի ունենալ, վոր ըլանկի մասած ազյու-
սակներն ու հարցերը չեն լրացվում նրանց կողմից:

Հաշվետու ըլանկը լրացնելու համար՝ ոգտագործվում են
կոլտնտեսություններում յեղած բոլոր փաստաթղթերը, գրու-
թյուններ՝ հաշվետվության գոյության դեպքում, իսկ յեթե հաշ-
վետվությունը բացակայել ե, ապա ուրեմն հաշվետվությունը
կազմվում և գոյություն ունեցող փաստերի հիման վրա:

Արտադրական պլանը կազմելու համար հիմնականում յելա-
կետ պետք ե ծառայեն հաշվետվության նյութերը, բայց վորով-
հետ 1931 թ. արտադրական պլանը պիտի կազմվի գեկտեմբեր
ամսին, այսինքն հաշվետու տարուց ավելի առաջ, դրա համար



ել անհրաժեշտ ե տարեկան հաշվետվության համար պահանջվող նյութերի պատրաստումը հարմարեցնել արտադրական պլան կազմելու վերաբերմամբ տարվող աշխատանքների մոմենտին:

Այդպիսով 1931 թ. առ 1-ն հունվարի յեղած նյութական միջոցների վերջնական հաշվետվությունը պատրաստելու միջոցին հաշվետվության մեջ մուծվում են ուղղումներ միայն այն փոփոխությունների վերաբերմամբ, վորոնք տեղի յեն ունեցել հաշվետվություններ կազմելու ժամանակաշրջանի ընթացքում արտադրական պլանի պետքերի համար, և լրացուցիչ կերպով կազմվում են լոկ այն աղյուսակները, վորոնք չեն պահանջել պլանի համար նախադարձագործում:

1. ՀԱՇՎԵՏՈՒ ԲԼԱՆԿԻ ԼՐԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Բլանկի լրացմանը ձեռնարկելուց առաջ հարկավոր ե.

ա) Լավ յուրացնել բլանկի բովանդակությունը, այսինքն ուշադրությամբ կարդալ բաժինների բոլոր գլխադրերը, այսուհետեւ և սյունակները, նույնպես և բոլոր հարցերը:

բ) Հետո, միաժամանակ հետևելով բլանկին, ուշադրությամբ կարդալ ստորև զետեղված բոլոր ցուցմունքները այն ժամանին, թե ինչպես պետք ե լրացնել աղյուսակները և տալ բլանկում առաջարկված հարցերի պատասխանները ու, վերջապես, զորկել բլանկը լրացնելու համար հարկավոր բոլոր նյութերը, ինչպես որինակ՝ անդամների ընտանիքի ցուցակը, ակտերը, հաշվեմատյանները, յեթե կան այդպիսիք, փաստաթղթեր և այլն. Վերոհիշյանների համար ոկտագործման նպատակով՝ զետեղել տվյալները բլանկում զետեղված աղյուսակների և հարցերի դասավորման կարգով:

2. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Բլանկը լրացնելու ժամանակ պետք ե խստիվ պահպանել հետեւյալ կանոնները.

ա) Բլանկը լրացվում ե անսպայմանորեն թանաքով:

բ) ոլոր հարցները և բարերը գրվում ան պ դ ն ընթառնելի (հնարավոր չափով առանց կեղտութելու և ջնշումների):

գ) Պատասխաններու և թվերը նշվում են անպայման այն աղյուսակներում՝ հարցերի զիմաց, վորոնք ունեն համապատասխան վերտառություններ:

Մի քանի աղյուսակներում, վորոնքի են՝ 6, 8, 9, 14, 15, 18, 23 և 26, պատասխանները գրվում են ձախ կողմից:

դ) Այս սյունյակները կամ հարցերին հատկացված տեղերը (կետ-գծիկներով), վորոնք չեն կարող լրացվել շնորհիվ կոլտնտեսություններում նման առարկաների և տնտեսական յերեսությունների բացակայության, վորոնց մասին բլանկում դրված են հարցեր, պարզապես գծվում են:

յ) Յեթե կոլտնտեսության մեջ կա այնպիսի յերեսություն կամ առարկա, սակայն նրա մասին աեղեկություն չկա, այն ժամանակ համապատասխան սյունյակներում կամ տեղերում պատասխանի համար գրվում ե՝ «տեղեկություն չկա»:

զ) Բոլոր ցուցմունքները (պատասխանները) տարածության, կշռաչափերի և հեղուկների չափերի մասին արվում են բացառապես մետրական միավորներով (ցանքսը հեկտարներով, այլ վոչ գեսյատիններով, ցորենը ցենտներով, այլ վոչ փթերով, և այլն):

ե) Վոչ մի գեպօպում չի թույլատրվում շտկել բլանկում տպած չափանիշները և տեղը դնել ուռաւական չափի միավորները. Դրա համար բոլոր տեղնկությունները, վորոնք կոլտնտեսության մեջ արտահայտվում են ուրիշ չափերով, պետք ե վերածվեն բլանկում նշված չափերի (որինակ, յեթե հացահատիկների մասին տեղեկությունը արված ե կիլոգրամներով, սակայն հաշվետվության մեջ պահանջվում ե տալ ցենտներով, ապա ուրեմն կիլոգրամը վեր ե ածվում ցենտների):

Ծանոթություն. Ռուսական չափերը՝ մետրական չափերի գերածման աղյուսակները՝ կցված են սրան վորպես համարված:

3. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ ԲԼԱՆԿԻ ԼՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հաշվետու բլանկի լրացման ժամանակ հարկավոր ե զեկավարվել հետևյալ ցուցմունքներով (ցուցմունքներ տրվում են այն աղյուսակների ու հարցների համար, վորոնք պահանջում են առաջաբանումներ):

1) Բլանկի վերեկ աջ անկյունում զետեղված ե գիտողություն, վորը լրացվում ե գծումով այն կոլտնտեսությունների կողմից, վորոնք հանդիսանում են կարմիր բանակային և վերընականածների կոլտնտեսություններ:

Կարմիր բանակայինների կոլտնտեսությունների անվան տակ հասկացվում են այն կոլտնտեսությունները, վորոնք կազմակերպված են զորացրման յենթարկված կարմիր բանակայիններից:

Վերաբռնակիչների կոլտնտեսությունների անվան տակ հասկացվում են այն կոլտնտեսությունները, վորոնց անդամների տնտեսությունները կազմակերպված են իրենց նախկին տեղերի կոլլեկտիվում կամ ընկերություններում, ասկայն, վորոնք նոր բնակավայրում իսկույն ձեռնարկել են տնտեսականության կոլլեկտիվ ձեռքին:

Ճիշտ նույնպես և այն կոլտնտեսությունները, վորոնք կազմակերպվել են վոչ թե իրենց անդամների նախկին բնակավայրում, այլ նոր բնակավայրում, իսկ մինչև այդ նրանց անդամները յեղել են անհատ տնտեսավարներ:

Ծանոթություն. Կոլտնտեսությունները, վորոնք բաղկացած են անհատական կարգով վերաբռնակված գյուղական տնտեսություններից, բայց վորոնք տարբեր ժամանակներում են վերաբռնակվել և վերաբռնակված տեղում մինչև կոլտնտեսության մեջ մտնելը՝ վարել են իրենց անհատական տնտեսությունը, — չեն համարվում վերաբռնակիչների կոլտնտեսություններ:

Վերնագրից հետո առաջին տողի վրա նշված ե «կոլտնտեսության 1930 թ. հաշվետվությունը» ըստ կետի . . . 193 -ից մինչև . . . 193 թ. ցույց ե տրվում այն ճշգրիտ ժամանակաշրջանը, վորոն ընդուրկվում ե հաշվետվությամբ: Այդ առանձնապես կարեղը ե այնպիսի գեպքում, յերբ հաշվետվությունը կազմում են այն կոլտնտեսությունները, վորոնք կազմակերպվել են հաշվետու տարում և հաշվել են ներկայացնում մեկ տարուց պակաս ժամանակի համար: Որինակ՝ 1930 թ. ապրիլի 1-ից մինչև 1930 թ. գեկտեմբերի 1 ը:

Հետեւյալ տողում լրիվ գրվում ե կոլտնտեսության լրիվ անունը, ըստ վորում պարտադիր ե նշել կոլտնտեսության ձեր. որինակ՝ գյուղատնտեսական արտել՝ «Կարմիր Հոկտեմբեր», կամ գյուղատնտեսական կոմմունա՝ «Էլենինի ռողի», կամ «Միխալովյան միամնական հողոգտագործման ընկերություն»:

ԸՆԴԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3) Յերկրորդ հարցում մատնանշվում ե այն տարին, վորում կոլտնտեսությունը ձեռնարկել ե տնտեսական գործունեյության:

Այն կոլտնտեսությունները, վորոնք ստեղծվել են հաշվետու տարվա ընթացքում, բացի տարուց նշում են նաև ամիսը:

4) Յերրորդ հարցում «Տնտեսության հիմնական ղեկավարը»-ում մատնանշվում ե այն ճյուղը, վորն ընթացիկ տարվա ամբողջ մթերքների մեջ տվել ե ամենաշատ յեկամուտը:

Այսպիսով պատասխանի մեջ գրվում ե հետեւյալ բնորոշումներից մեկը՝ հացահատիկային կուլտուրաներ (ցորեն, բրինձ և այլն), շաքարի ճակընդեղ, կանեփի մշակություն, բամբակի մշակություն, այգեգործություն, բանջարաբուծություն, կաթնա-անամագահություն, մսացու կենդանիների զարգացումը, վոչխարաբուծություն, խողաբուծություն: Այն դեպքերում, յերբ յերկու ճյուղն ել ըստ յեկամտի չափերի հավասարաթեք են, այն ժամանակ ցույց են տրվում յերկուսն ել: Որինակ՝ «կաթնա-բանագրական»:

5) 4-րդ և 5-րդ հարցերում նկատի յե առնվում պայմանագրի վրա հիմնված մշտական արտադրական կապ մեքենա-տրակտորային կայանի հետ (կամ սովորողի հետ): Հողոգտագործման և բերքը հավաքելու առթիվ:

Ծանոթություն. Ժամանակավոր արտադրական ոգնություն, վոր ստացել ե կոլտնտեսությունը վորևե կամպանիայի շրջանում, այստեղ չի մատնանշվում:

6) 6-րդ «Հողոգտագործում» բաժնում ցույց ե տրվում բոլոր հողը, ինչպես հարմարը, նույնպես և վոչ-հարմարը, վորը կոլտնտեսությունն ոգտագործում ե կոլլեկտիվ կերպով, անկախ այն բանից, թե ինչպես ե գոյացել հողային ֆոնդը, — համայնացվածի հաշվին, պետությունից ստացված հողային ունեցվածքից, թե՝ յերկարատև վարձակալության հաշվին:

Անդամների տնատեղերը (յօձեման) և հողային արոտատեղերը (յօցման), վորոնք գտնվում են անդամների անձնական ոգտագործման ներքո, — այստեղ չեն մտնում (հաշվի չեն առնվում):

Հերկի անվան տակ հասկացվում ե գաշտային հողը՝ հերկված: Խոպան ու խամ հողերը վարելահողերի շարքը չեն դասվում և մատնանշվում են հատուկ հողբաժնի տակ, վորոնք պետքական են հետագա վարուցանքի համար:

Մարգագետիններն ու արոտատեղիները հաշվի յեն առնվում ինքնուրույն կերպով և հետագայում վարելու համար պետքականների մեջ չեն ներառվում:

Բանջարանոց անվան տակ հասկացվում են այն հողերը, վորոնք շարունակ ոգտագործվում են վորպես բանջարանոցային կուլտուրա (լինեն նրանք ցանկապատված թե վոչ): Բանջարանոցային կուլտուրաները, վորոնք գրավում են դաշտերում, այդ սյունյակում հաշվի չեն առնվում, այլ մուծվում են վարուցանքի տարածության մեջ (լինեն ջրովի թե զեմիք):

7) Կոլտնտեսության կազմը:—Առաջին բաժնում. ա) առաջին տեղը ըստ տնտեսությունների առաջին տողի վրա գրվում ե գյուղական տնտեսությունների ընդհանուր թիվը, մյուս տողերում նրանցից դուրս են հանվում բատրակային, չքափրական, միջակի և ունկորների տնտեսությունները: Վերջին տողում ցույց ե տրվում կոլտնտեսության մեջ մտած ընտանիքների և մենամենակների, այսպես կոչված «կողմնակիների»—վրչ-գյուղացիների, այսինքն բանվորների, ծառայողների (ուսուցիչների, գյուղատնտեսների, հաշվետարների և այլն) թիվը: Կոլխոզի անդամների տնտեսության այս կամ այն սոցիալ-դասակարգային խմբի շարքը դասենու ժամանակ, հարկավոր ե նկատի ունենալ նրանց սոցիալական դրությունը մինչև կոլտնտեսության մեջ մտնելը:

Ընդ սմին անդամների գիտողությունների բաժնում ըստ սոցիալ-տնտեսական հատկանիշների իրք չիմք և ընդունվում հարկայենթարկման նշանը՝ վորպես կողմնավորոշիչ դրություն, այսինքն՝ 1) գյուղտնտմիասնարկից ազատվածները պատկանում են չքափրական խմբին, ընդ սմին այդ խմբից առանձնացվում են բատրակային տնտեսությունները, վորոնց թիվը գրվում և առաջին տողում:

Բատրակային տնտեսության անվան տակ բացի զրանից պետք ե հասկանալ այնպիսի տնտեսություններ և ընտանիքներ, վորոնք իրենց աշխատողներին սիստեմատիկաբար ուղարկել են գյուղատնտեսական աշխատանքների, և վորոնց համար նման զրագունքը հանդիսացել ե գոյության հիմնական աղբյուրը:

2) Նրանք, վորոնք վճարում են գյուղատնտեսական հարկն ըստ նորմաների, դասվում են միջակ խմբի շարքը:

3) Նրանք, վորոնք գյուղատնտեսական հարկը վճարում են ավելացած նորմայով, դասվում են ունեոր խմբի շարքը:

Առաջին սյունյակում հաշվի յեն առնվում մենամենակների և ընտանիքների տնտեսությունների գոյությունն առ 1-ն հռն-վարի 1930 թ.:

Այն կոլխոզները, վորոնք 1930 թվի հունվարի 1-ից հետո են կազմակերպվել «յեղել և 1/1 30 թ.» սյունակում, գծվում ե գոյություն ունեցող տնտեսությունները, ընտանիքները, մենամենակները, ինչպես կազմակերպման մոմենտում, նույնպես ել նրանից հետո, գրվում ե 2-րդ սյունակում: Աղյուսակը՝ պետք ե սկսել լրացնել 4-րդ սյունակից, յերկրորդ սյունակում գրվում ե ամբողջ հաշվետու շրջանում կոլտնտեսությունում մտնող տնտեսությունների քանակը, (անկախ գուրս յեկողներից), նույնպես և նրանց բաժանումն ըստ սոցիալ-տնտեսական նշանների:

Յերբորդ սյունյակում գրվում ե անտեսությունների ընդհանուր քանակը, վորոնք դուրս են յեղել հաշվետու ժամանակաշրջանում կոլտնտեսությունից, ներառնելով դրա մեջ նաև այն հին անդամներին, վորոնք յեղել են կոլխոզիվի մեջ տարուց ավելի և նույնպես նրանց բաժանումներն ըստ սոց.-դասակարգային նշանների, և վերջապես 4-րդ սյունյակում գրվում ե տնտեսությունների քանակը (ընտանիքներին և մենամենակներին վերջին տողում) առ մեկն հռնվարի 1931 թ. տվյալներով:

Յերկրորդ «ըստ ազգաբնակչության» բաժնում տեղեկություն ե տրվում կոլտնտեսության բնակչության քանակի, նրանցից առ 1/1 31 թ. աշխատավորների մասին, այն անդամները, վորոնք դրսում են յեղել կամ կարմիր բանակում, չեն առանձնացվում և հաշվի յեն առնվում ընդհանուր քանակի մեջ:

Աշխատունակների հասակը. 1) մեծահասակներ են հաշվվում 16 տարուց սկսած:

Մեծահասակ աշխատունակների համար հասակի վերջնական սահմանում չի հաստատվում, դրա համար ել այն ծերունիները, վորոնք 66 տարին անցել են, իսկ կանայք 55-ից, այն դեպքում, յեթե նրանք կոլխոզիվ աշխատանքներում ունենում են փաստական մասնակցություն, ցույց են տրվում վորպես աշխատավորներ, 2) անչափահաս աշխատունակների հասակը վորոշվում ե սկսած 12-ից մինչև 16 տարեկանը, այսինքն՝ վորոնք ունեն լրիվ 15 տարի: Անզրագետներ են համարվում կոլտնտեսության այն անդամները, վորոնք չեն կարող վոչ կարդալ վոչ գրել, և չեն անցել անգրագիտությունը վերացնող կուրսերը, և վերջապես «ըստ ազգությունների» բաժնում սկզբում գրվում են կոլտնտեսությունում յեղած անդամների ընդհանուր քանակը (գյուղտնտեսությունները) ըստ ազգությունների. հետո նրանց բաժանումը տարվում ե ըստ ազգային նշանների:

Ազգերի շատության դեպքում՝ հաշվել ինչքան բլանկում տեղ կա, միայն գլխավոր ազգությունները:

8-րդ «Կուլտ-կենցաղային սպասարկումը» բաժնում տրվում է պատաժան (այս կամ վոչ), թե այս կամ այն հիմնարկությունն ունի՞ կոլտնտեսություն, թե վոչ, ընդ սմին մանկամուռների վերաբերմամբ նկատի յեւ առնվում յերեխաների այն քանակը, վորի համար շենքը նախատեսվել եւ:

Ճաշարան յեղած դեպքում ցույց եւ տրվում, թե նա որական վորքան ճաշողների յեւ սպասարկում:

9-րդ բաժնում ցույց եւ տրվում տնտեսության տարրեր ճյուղերի վերաբերյալ զեկուցումների, դասախոսությունների քանակը, վորոնք տեղի յեն ունեցել կոլտնտեսությունում գյուղատնտեսական, կուլտ-կենցաղային և արտադրական հարցերի շուրջը. հաշվետու զեկուցումներ այստեղ չեն ներառվում:

10-րդ «Կառուցվել և համայնացվել եւ կոլտնտեսության կողմից 1930» բաժնում հաշվի յեւ առնվում ինչպես գյուղատընտեսական նշանակություն ունեցող համայնացված կառուցումները, նույնական և այն շենքերը, վորոնք բարձրացվել են 1930 թ. նրանք, վորոնք հաշվետու տարրումն են սկսվել, բայց չեն ավարտվել:

Տարվա վերջում, կոլտնտեսություններում յեղած համայնացված շենքերը կամ այն շենքերը, վորոնք կառուցվել են հաշվետու տարրուց առաջ, պատաժանում չի ցույց տրվում: 1/1 31 թ. կառուցումների սյունյակում հարկավոր եւ ներառել կոլտնտեսությունների 1/1 31 թ. բոլոր կառուցումների քանակը և ծավալը. այստեղ չեն մտնում մինչեւ 1/1 31 թ. համայնացված շենքերը, նորոգվածները:

«Կառուցումների անունները» սյունյակում գրվում են այն շենքերն ու տեխնիքական կառուցումները, վորոնք վերը բերած նամենիլատուրայում չեն նախատեսված: Նամենիլատուրայի հատուկ բաժնում գրվում են նույնական հաշվետու տարրում շենքերը, տեխնիքական կառուցումները, կապիտալ-վերանորոգումները, հարմարեցվածները:

Աղյուսակի I և II-րդ սյունյակներում գրվում են այն կառուցումների քանակը և ծավալը, վորոնք կոլտնտեսությունը նկատի յեւ ունեցել (յենթաղրել) կառուցել, վերանորոգել և ընթացիկ տարրում կապիտալ նորոգման յենթարկել:

7-րդ սյունյակում գրվում եւ կոլտնտեսության սեփական միջոցների ընդհանուր գումարը և կառուցումների մեջ ներդրումները, անկախ այն բանից, թե այդ ներդրումները ինչումն են արտահայտվում, փողային միավորներում թե աշխատանքում (յեկամտի բաշխումն ըստ աշխատանքի որերի գնահատականի), կամ նյութականում:

8-րդ սյունյակում տրվում եւ փոխառական (վարկ) միջոցների գումարը, վորը ծախսվել եւ կոլտնտեսության կողմից այդ կառուցումների վրա:

Կառուցումների ծավալն արտահայտվում եւ միավորներում, վոր ցույց եւ տալիս նրանց տարրողականությունը. որինակ՝ անսունների գոմը—անսառնների ընդհանուր թվի համեմատությամբ, սիլսոնի փոսեր—նրանցում տեղավորված սիլսոնի զանգվածի քանակի վերաբերմամբ:

II-րդ բաժնում «Մեռած ինվենտար»:

Աղյուսակում հաշվի յեն առնվում բոլոր այն մեքենաները և գործիքները, վորոնք ցույց են տրված թվարկածում:

Առաջին աղյուսակում ձախից՝ «կա 1/1 31 թ.» ներկայացվում եւ նրանց քանակությունը ըստ 1/1 31 թ. յեղածի, այդ քանակությունից հետեւյալ սյունյակում առանձնացվում են այն մեքենաների քանակությունը, վորոնք հայթայթվել են կոլտնտեսության կողմից հաշվետու տարրում, իսկ մյուս 2 սյունյակներում գրվում են այն միջոցների գումարը (ոռութիներով), վորոնք մացրել եւ կոլտնտեսությունն այդ մեքենաները հայթայթելու համար. ա) կոլտնտեսության միջոցների, բ) վարկերի հաշվին:

Տրակտորների վերաբերյալ, բայցի քանակից, անհրաժեշտ են արտահայտել նրանց ընդհանուր կարողությունը ձիու ուժով, նույնը և շարժիչ ուժերի վերաբերյալ: Միայն մատնանշշվում են կոլտնտեսության տրակտորներն, այն ել պիտանիները:

Այն տրակտորները, վորոնք մեքենատրակտորային կողմից եւ տրված, չեն մատնանշվում:

12-րդ «Արդյունաբերություն և ոժանդակ ձեռնարկություններ» բաժնում տրվում եւ տեղեկություն կոլտնտեսությանը պատկանող բոլոր արդյունաբերությունների, նույնական և արհեստակուսարային և ոժանդակ ձեռնարկների (դարբնոցների նորոգման արհեստանոցներ և այլն) մասին, ընդ սմին առաջին սյունյակում հարկավոր եւ գրել այդ ձեռնարկությունների անունները, որինակ «աղորայք», «նորոգման արհեստանոց» և այլն:

Բերվող (զաօթնայ) հումույթի տակ հարկավոր և հասկանալու ուրիշի հումույթը, փորբ մշակվում ե կոլտնտեսության ձեռնարկություններում:

13-րդ «Անասուն» բաժնում մատնանշվում ե անասունների քանակը ըստ տեսակների և հասակային խմբերի, նույնպես և թռչունները, ճագարները, մնջուները:

Տեղեկություն տրվում ե 11 31 թ. յեղածովը, ընդ սմին առկախ բոլոր տեսակների և ցեղերի կենդանիների ընդհանուր քանակից, առանձնացվում ե ընդհանուր սյունյակներում կենդանիների և տեղական լավացման յենթարկվածների քանակը:

Հատկապես առանձնացվում ե կենդանիների ամեն մի տեսակը ընդհանուր թվից ըստ ամբողջ նոմենկատուրայի հաշվետու շրջանում, հոտի մեջ կատարած փոփոխությունները.

- 1) Համայնացվածները.
- 2) Գնումները.
- 3) Ստացված և աճից.
- 4) Կորո: ստը:

Բոլոր տողերում, բացի վերջինից, հաշվի յեն առնվում այն անասունները, փորոնք կոլլեկտիվ կերպով են ոգտագործվում, միայն վերջին սյունյակում պետք ե հաշվի առնվեն այն անասունները, փորոնք դանվում են անդամների անձնական ոգտագործման ներքո, այսինքն՝ չհամայնացված անասունները:

Համայնացված այն անասունները, փորոնք բաշխված են ըստ անդամների տների և կոլտնտեսության կողմից, դրանք դըրված են իր անդամների խմբական կամ անհատական ոգտագործման տակ—վերջին ռանդատական ոգտագործման տողում չեմ տցվում, այլ հաշվի յե առնվում առաջին տողում:

Ազնվացեղ անասուններ են կոչվում նրանք, փորոնք գըրանցված են ցեղական գրքերում, իսկ լավորակները նրանք, փորոնք հավանություն են գտել հողբաժնի կոմիսարի կողմից:

Արտադրող անասունների անվան տակ հասկացվում են այն կենդանիները, փորոնք պահպում են հենց այդ նպատակի համար:

Բանող այն արու ձիերը, փորոնց կոլտնտեսությունն ոգտագործում ե և փորպես բեղմանավորող ձիեր, արտադրող ձիերի խմբում չեն ներառնվում, այլ ցույց են տրվում բանող ձիերի խմբում:

Ազնվացեղ սերող ձիերն այն դեպքում, յեթե նրանք միւնույն ժամանակ մտնում են բանող անասունների կազմում—գրվում են «բանող ձիերի» խմբում:

14-րդ «Կաղըրերի» բաժնում (կետերով) ազատ տողերում գրվում են մասնագիտության այն տեսակները, փորոնք գոյություն ունեն կոլտնտեսության մեջ, բայց նույնկատուրայով չի նախատեսվել, որինակ՝ ուսուցիչներ, կուլտ-աշխատողներ, գեղագործներ, վերակացուներ, հովիվներ և այլն: Առաջին յերկու սյունակներում (ձախից) ցույց ե տրվում կոլտնտ. անդամների քանակը ըստ մասնագիտության, և նրանց ընդհանուր քանակից առանձնացվում ե «դրամում յեղողների» քանակը:

15-րդ «Կաղըրերի պատրաստում» բաժնում «կուրսերի անուններ» սյունյակում գրվում են բոլոր կուրսերի անունները, ուր յեղել են կոլխոզներները, և նրանց լինելու տեսլությունը: Այստեղ ե գրվում նաև գյուղատնտեսական խմբակները, փորոնք կազմակերպվել են կոլտնտեսության դպրոցի կողմից և կոլխոզների քանակը, փորոնք անցել են այդ կուրսերով: Այդ բաժինը լրացնելու որինակ:

| Կոլխոզնիկների քանակը, փորոնք | Կուրսերի գյուղատ. խմբականցել են կուրսերով | Կուրսերի անունները |
|------------------------------|---|--------------------|
|------------------------------|---|--------------------|

- | | |
|------------------------------------|----------------------|
| 4 1) Յերեք ամսայա յերկրային (օճլ.) | այգի-բանջարանոց. |
| 3 2) յերկշարաթյա շրջանային | անասնապահական |
| 1 3) յերկամյա յերկրային | կոռպերատիվային |
| 5 4) միամսվա մեջրջանային | կուլտ. լուսավորչական |
| 12 5) անասնաբուծական խմբակ | կոլտնտեսությունում |
| 10 6) դպրոցին կից գյուղ. տնտ. | խմբակը |

16-րդ «Աշխատանքային ծախսում» բաժին: -1) Աշխատանքային ծախսումները հաշվի յեն առնվում ամբողջ այն ժամանակաշրջանի համար, փորի համար կազմվել ե հաշվետվությունը:

Կոլտնտեսության անգամների աշխատանքի ծախսումները հաշվի առնման համար հարկավոր ե ոգտվել աշխատանքի ձեւ 10 տարելից, կրծատ հաշվետարությամբ կամ ուրիշ փաստաթղթերով՝ ինչպիսիները կամ կոլտնտեսություններում աշխատանքները հաշվի առնելու համար: Հստ տարելի հաշվի յեն առնվում այն որերը, փորոնք սկզբից ծախսվել են ինչպես տղամարդկանց աշխատանք, հետո փորպես կանանց և վերջապես վորպես անչափահասների աշխատանք:

Արտադրական հաշվի արդյունքները կազմում են կոլանդամի մարդա-որվա աշխատանքի ծախսումը և գրվում ե հաշվետու

բլանկի համապատասխան տողերում.—առաջինում մարդկանց, յերկրորդում կանանց և, վերջապես, յերրորդում անչափահասներինը։ Հետեւյալ գործ տողում հաշվվում ե առաջին յերեքի արդյունքները, իսկ 5-րդ՝ «բանվորական ույժի վերացումն աշխատավորների» բաժնում, գրվում են աշխատավորների ընդհանուր քանակը, վորոնք վողջ հաշվետու ժամանակաշրջանում հաշվվել են անդամների վրա, և վորոնգով կատարվեն ե տեսակա ու ու

Վարձու աշխատողների աշխատանքի ույժերի հաշվառումը կոլտնտեսությունում, կատարվում ե տարեկով, ըստ սմին մարդա-որերը հաշվվում են զատ-զատ ըստ առանձին բանող խմբակների՝ 1) մշտական (տարեկան), 2) սեպոնային և 3) որական։ Չորրորդ տողում գրվում ե վարձու աշխատողների բոլոր խմբակների աշխատած մարդա-որերի արդյունքները, և հինգերորդում գրվում ե վորպես աշխատավարձ վճարված ընդհանուր գումարը (առանց ապահովագրության և հանումների)։ Վերջին «Ղ» տողում պետք ե ցույց տրվի մարդա-որերի քանակը, վորը կատարվել ե անվարձ սովորողների արտադրական ոգնության, բանվորական բրիգադների, շեֆ-կազմակերպության ձեռփ:

Մարդա-որերին հաշիվը հետեւյալ կերպ և կատարվում. —որին սակա 10 որվա ընթացքում բանել են 50 աշխատողներ, 50-ը բազմապատկելով 10-ի վրա ստացվում ե 500 մարդա-որերը:

Ոգտվելով ընտանեկան ունեցվածքային ցուցակով և կող-
տնտեսության մեջ մտնելու և դուրս գալու ժամանակով, ամեն
մի աշխատունակի (մարդ, կին, անչափաս) նկատմամբ հաշվի յեն
առնվում այն որերը, վորոնք նա տարել և կոլտնտեսությունում:
Այն անձինք, վորոնք կոլտնտեսում յեղել են կարճ ժամանա-
կով, և դրա համար ել մասնակցություն չեն ունեցել կոլեկտիվ
աշխատանքներում, և նույնպես այն անձինք, վորոնք մշտական
աշխատել են ֆաբրիկաներում, գործարաններում, հիմնարկներում
և այլն, հաշվեառման մեջ չեն մտնում: Գործնական հարմարու-
թյան նպատակով սկզբից կարելի յե հաշվի առնել այն կոլան-
դամներին, վորոնք կոլտնտեսությունում յեղել են լրիվ տարին.
բազմապատկելով նրանց թիվը 365 որվա վրա, ստանում ենք
(վորպես որինակ) հետեւյալը.

Կովսոցնիկների թիվը որեւէի թիվը մասնաւութեաւ թիւ

| | | | | | |
|------------------|----|---|-----|---|-------|
| <i>Տաղամարդ</i> | 20 | × | 365 | = | 7.300 |
| <i>Կին</i> | 25 | × | 365 | = | 9.125 |
| <i>Անչթվահաս</i> | 10 | × | 365 | = | 3.650 |

Ծանոթություն, Այս կոլտնտեսությունները, վորոնք
առեղջվել են 1930 թ. ընթացքում, կոլտնտեսութենում լի-
նելու որերի հաշիվը տարվում ենույնպիսի յեղանակով, ինչը
ցույց ետրված այն կոլտնտեսությունների համար, վո-
րոնք գոյություն են ունեցել տարվա սկզբից, միայն լոկ
այն տարբերությամբ, վոր այն որերի քանակը, վորի վրա
ըազմապատկվում ետքամատունակների թիվը, վերցվում ե-
կոլլեկտիվ-անտեսական գործնեյության սկզբից մինչև հաշ-
վետու տարվա մնացածը. որինակ, յեթե կոլտնտը կազմա-
կերպվել են հունիսի մեկին, այն ժամանակ որերի թիվը
պիտի վերցնել վոչ թե 365, այլ 214; Ինչ վերաբերում ե-
աշխատունակ կոլխոզիկներին, վորոնք կոլտնտեսու-
թենում յեղել են վոչ լրիվ տարի, (մտել են և դուրս են
յեկել կոլտնտից տարվա կեսին), այն ժամանակ նրանց ա-
մեն մեկի համար հաշվում ե որերի այն քանակը, վոր նա
յեղել ե կոլտնտում. Այս հաշիվը կարելի յե անել ինչպես
մի ամսվա համար, նույնպես և վոչ լրիվ ամսվա համար:
Այսպես որինակ, իվանովը կոլտնտի մեջ ե յեղել մարտի
մեկից մինչև հոկտեմբերի 15-ը, այս գեղաքում, նրա որերի
ընդհանուր թիվը 1-111ից մինչև 1/X 30 թ. հավասար է
214 որի՝ գումարած հոկտեմբերի 15-ը, վորը կանի 229: Այսպի-
սով հաշվի առնելով տղամարդկանց որերի թիվն առանձին,
կանաց և չափահատներին առանձին, դրանով ավելանում
են նրանց մարդա-որվա հաշվի վրա, վորոնք յեղել են ամ-
բողջ կոր տարբին. որինակ՝

Մառո-որերի քանակը

Այս կոլմոզնիկու, վորոնք Կոլմոզնիկներ
յեղել են կոլտնտում լրիվ վոչ լրիվ տար-
տահն յեղողները

Ամբողջ
գումար

| | | | | | |
|-----------------|-------|---|-------|---|--------|
| <i>Տղամարդ</i> | 7,300 | × | 5,475 | = | 12,775 |
| <i>Կին</i> | 3,125 | × | 730 | = | 9855 |
| <i>Չափահաս</i> | 3,650 | × | 3,285 | = | 6,935 |
| | | | | | |
| <i>Ընդամենը</i> | | | | | 29,565 |

Այսպիսի հաշվի հետևանքով ստացվում է բոլոր աշխատ-
ունակների կղամատում յեղած որերի ընդհանուր թերը՝ վորը
պրվում և հաշվիաժվության մեջ:



Ծանոթություն. Սույն հաշիվը բերվում է միայն որինակի համար, վորով դեկավարվելով՝ ամեն մի կոլտնտպետք և անցկացնի իրական հաշվառում, յենելով գոյություն ունեցող փաստական դրությունից:

Մեզոնիկների թվին են պատկանում այն բանվորները, վորոնք վարձվել են մի ամիս ժամանակով վոչ պակաս, և նույնպես այն բանվորները, վորոնք աշխատանքի պայմանների և սոցապահովագրական վճարի տեսակետից հավասարեցվում են սեզոնիկներին:

4-րդ կետում՝ «կոլխոզի անդամի դրսի աշխատանքը».— 1) մեքենատրակտորային կայանում, 2) պետական տնտեսության մեջ, 3) հարևան կոլտնտում վարձու կամ անվարձ կերպով—գրվում ե կոլխոզամի այդ կազմակերպություններում կատարած մարդա-որերի աշխատանքի քանակը:

Դրսում աշխատելու անվան տակ (под отходничеством) հասկացվում է կոլխոզներին այն աշխատանքը, վոր տարվում և ուրիշ կողմերում՝ կոլտնտ. աշխատանքներից գուրս:

ԼՐԱՅՈՒԹԻՉ ՔԱՐՏԻ ՀԱՄԱՐ ՎՈՐՄԵՍ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՆԿԱՏԵԼ

(Վորը լրացնում են այն կոլտնտեսությունները, վորոնք աշխատանքի ծախսումների հաշիվը տարեկ են ըստ արտադրական ճյուղերի):

Լրացուցիչ քարտի լրացումը հիմնականում կատարվում է համաձայն վերև բերած ցուցմունքներին, լոկ մի տարբերությամբ, վոր հաշիվը տարվում է վոչ թե լրիվ տարվա համար, այլ առանձին կվարտաների համար՝ հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը, յերկրորդ կվարտա՝ ապրիլի մեկից մինչև հունիսը, յերրորդ՝ հուլիսի մեկից մինչև սեպտեմբերի 30-ը և չորրորդ կվարտալ՝ հոկտեմբերի մեկից մինչև դեկտեմբերի 31-ը։ Բնդ սմին ամեն մի կվարտալի որերի հաշիվը վերցվում է համապատասխան որացույցային որերի։— առաջին կվարտալում 30 որ, յերկրորդում՝ 91, յերրորդում և չորրորդում 92-ական որեր։ Այսպիսով, ամբողջ ստացած հաշիվը ըստ կվարտաների կդրվի լրացուցիչ կարտի համապատասխան սյունյակներում։ Կոլտնտ.-ները, վորոնք կազմել են լրացուցիչ քարտերը, փոխադրում են տարեկան հաշվետվության հիմնական բանակի 16-րդ բաժնի համապատասխան սյունյակներում։

ՏՐԼԻՑԱ 17-ՐԴ—ՑԱՆՔՍ ՑԵՎ ԲԵՐՔ

Ծավալուն նույնկատուրայում, բոլոր կուտուրաների վերաբերյալ—դաշտավարական, բանջարանոցային, բաղչային, խոտհարքային, տեղեկություն արվում են միայն ըստ ցանքսերի և արոտատէղիների (ու ՍՈՅԱՅԱ), վորոնք գտնվում են կոլխէտիկ ոգտագործման ներքո։

Անդամների անհատական ցանքսը, վորը գտնվում է նրանց անձնական ոգտագործման ներքո, այս աղյուսակում չի մտնում, և հաշիվ յե առնվում դրան նվիրված հատուկ բաժնում։

Ցանքսը (ըստ պլանի և փաստական), ցանքսի և բերքի վոչնչացումը մտնում է հաշվեառման մեջ միայն ըստ կոլխէտիկ ցանքսերի։

«Հստ պլանի յեղել ե մատնանշված» տողը լրացվում է այն կոլտնտեսությունների համար միայն, վորոնք անցել են 30—31 թ. թ. համար ցանքսերի պլան, իսկ այն կոլտնտեսությունները, վորտեղ այդ բացակայել ե տողը չի լրացվում։

Տվյալ անուն ունեցող կուտուրաները թվարկելիս՝ տեխնիկական, յուղաբեր, սիլոսային և այլն, դրանցից պետք ե գրանցել միայն այնպիսիները, վորպիսիներ յեղել են տվյալ կոլտնտեսություններում։ Այսպիսով համապատասխան վերտառությունների տակ գրվում են նրանց անունները, որինակ. «Տիկնիկական» վերնագրի տակ գրվում են՝ կանեփ, դեղին թութուն, մախորկա և այլն, կամ «Սիլոսների» վերտառության տակ—յեգիպտացորեն սիլոսի համար, արեածաղիկ և այլն։

«Կոչնչացավ զա և չի ցանքել» տողում—ամեն մի կուտուրայի համար ինչպես աշնանացանի, նույնպես ել զարնանացանի համար ներկայացվում է հողային այն տարածությունը, վորը վոչնչացվել ե գարնանը և ամրանը։ Աշնանացանի ձմեռային վոչնչացումը գրանցվում է հատուկ բաժնում՝ բլանկի ներքե, աղյուսակի կողքին։

Խոտհարքի տարածությունը ինչպես մարգագետնիցը, նույնպես և հանգստացած և տարված հողից (ալեջի կօսմոյ), վորից վերցվել ե խոտի բերքը—գրանցվում են յերկրորդ սյունյակում՝ «փաստապես ցանքել ե» անվան տակ։

Հատիկային զլխավոր կուտուրաներ, վորոնք ցանքել են զաված սերմերով, առանձնացվում է առանձին տողում։ Զաված սերմերի ցանքսի տակ հարկավոր ե հասկանալ այն կուտուրա-

ները, վորոնք ցանվել են փորձման բովով անցած, ընտրված մաքուր տեսակի սերմերով, վորոնք ստացվել են վորպես մաքուր աեսակի սերմեր՝ հայթայթող կազմակերպությունների կողմից, և նույնպես այն սերմերը, վորոնք ստացվել են տիրող փորձադաշտերից:

